ԴԱՍ 10

ԱՆՁԱՓԱՀԱՍԻ ԻՐԱՎԱՁԱՓ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1 Անչափահասի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առանձնահատկություններն են

Ա ազատությունից զրկելու բացառիկությունը: *Միայալ է, քանի որ թեև պնդումն ինքնին ճիշտ է, սա սպառիչ պատասխան չէ. ճիշտ է նաև 2-րդ պատասխանը:*

Բ ազատությունից զրկելու հնարավորինս սեղմ ժամկետները: *Միայալ է, քանի որ թեև պնդումն ինքնին ճիշտ է, սա սպառիչ պատասխան չէ. ճիշտ է նաև 1-ին պատասխանը:*

Գ ազատությունից զրկելու բացառիկությունը և ազատությունից զրկելու հնարավորինս սեղմ ժամկետները: Ճիշտ է՝ վերոնշյալ դիտարկումների հաշվառմամբ:

Դ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը միայն առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով: *Միայալ է, քանի որ նման օրենսդրական սահմանափակում նախատեսված չէ:*

2 Ըստ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանք կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ

Ա նա խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները: ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Բ նա երկրորդ անգամ է հանցանք կատարել: *Միայալ է, քանի որ համահունչ չէ օրենսդրական կարգավորումներին:*

Գ առկա է նրա կողմից նոր հանցանք կատարելու վտանգ: *Միայալ է, քանի որ սա առհասարակ խափանման միջոց ընտրելու հիմքերից է:*

Դ նրա ծնողները դեմ են հսկողության հանձնելու խափանման միջոցի կիրառմանը: *Միայլ է, քանի որ օրենսդրորեն նման պայման նախատեսված չէ:*

3 Անչափահասների գործով ապացուցման առարկան ներառում է հետևյալ առանձնահատուկ հանգամանքները.

Ա տարիքը, կյանքի և դաստիարակության պայմանները: *Միայլ է, քանի որ թեև պնդումն ինքնին ճիշտ է, ճիշտ է նաև 2-րդ պատասխանը:*

Բ առողջության և ընդհանուր զարգացման վիճակը: *Միայլ է, քանի որ թեև պնդումն ինքնին ճիշտ է, ճիշտ է նաև 1-ին պատասխանը:*

Գ քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: *Միայլ է, քանի որ այդ հանգամանքները մտնում են ընդհանուր ապացուցման առարկայի մեջ:*

Դ **ճիշտ են 1-ին և 2-րդ պատասխանները:** ***Ճիշտ է՝ վերոնշյալ դիտարկումների հաշվառմամբ:***

4 Ըստ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ որպես անչափահասների գործով ապացուցման առարկայի առանձնահատուկ հանգամանք նախատեսվել է

Ա **անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը:** ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Բ կյանքի և դաստիարակության պայմանները: *Միայլ է, քանի որ սա բխում է գործող, այլ ոչ թե նոր օրենսդրական կարգավորումներից:*

Գ առողջության և ընդհանուր զարգացման վիճակը: *Միայլ է, քանի որ սա բխում է գործող, այլ ոչ թե նոր օրենսդրական կարգավորումներից:*

Դ թվարկված պատասխաններից որևէ մեկը ճիշտ չէ: *Միայլ է, քանի որ պատասխաններից առնվազն մեկը ճիշտ է:*

5 Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

Ա Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է ձերբակալման կամ մեղադրանքի առաջադրման պահից: ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Բ Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, եթե քրեական գործով վարույթին անչափահասի օրինական ներկայացուցիչը չի մասնակցում: *Միայալ է, քանի որ օրենսդրական նման սահմանափակում նախատեսված չէ:*

Գ Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պաշտպանի մասնակցությունը պարտադիր չէ: *Միայալ է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

Դ Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, եթե անչափահասին մեղսագրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն: *Միայալ է, քանի որ օրենսդրական նման սահմանափակում նախատեսված չէ:*

6 ՀՀ գործող քրեադատավարական կարգավորումների համաձայն՝ որպես օրինական ներկայացուցիչ պետք է թույլատրվի մասնակցել այն ծնողին, որդեգրողին, խնամակալին կամ հոգաբարձուին,

Ա որի թեկնածությունը պաշտպանում են բոլոր օրինական ներկայացուցիչները: *Միայալ է, քանի որ թեև այս պնդումն ինքնին ճիշտ է, սա սպառիչ պատասխանը չէ. ճիշտ է նաև 2-րդ պատասխանը:*

Բ ով տվել է իր համաձայնությունը: *Միայալ է, քանի որ թեև այս պնդումն ինքնին ճիշտ է, սա սպառիչ պատասխանը չէ. ճիշտ է նաև 1-ին պատասխանը:*

Գ որի մասնակցության վերաբերյալ իր համաձայնությունն է տվել անչափահասը: *Միայալ է, քանի որ նման օրենսդրական պայման նախատեսված չէ:*

Դ **որը բավարարում է 1-ին և 2-րդ պատասխաններով նախատեսված պայմաններին:** ***Ճիշտ է՝ վերոնշյալ դիտարկումների հաշվառմամբ:***

7 **Հիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:**

Ա Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի ընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները: *Միայն է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

Բ **Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:** ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Գ Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք չունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը: *Միայն է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

Դ Անչափահասին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով անչափահասն իրավունք չունի հրաժարվել իր պաշտպանից: *Միայն է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

8 **Հիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:**

Ա ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում վարույթին ծնողի կամ որդեգրողի մասնակցությունը բացառող հանգամանքներ: *Միայն է, քանի որ նման օրենսդրական հնարավորություն ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսվել է:*

Բ Վարույթին ծնողի կամ որդեգրողի մասնակցությունը կարող է բացառվել միայն պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում: *Միայն է, քանի որ նման օրենսդրական սահմանափակում նախատեսված չէ:*

Գ Վարույթին ծնողի կամ որդեգրողի մասնակցությունը կարող է բացառվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում: ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Դ Վարույթին ծնողի կամ որդեգրողի մասնակցությունը կարող է բացառվել, միայն եթե վերջիններիս մասնակցության դեմ առարկում է անչափահասը: *Միայն է, քանի որ նման օրենսդրական սահմանափակում նախատեսված չէ:*

9 Ըստ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝

Ա անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի պայմանները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, ում տասնութ տարին չի լրացել ձերբակալման կամ մեղադրանք ներկայացնելու պահին: ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***

Բ անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանող գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին: *Միայն է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

Գ անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները սահմանող գլխի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու պահին: *Միայն է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

Դ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի պայմանները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, ում

տասնութ տարին չի լրացել քրեական գործ հարուցելու պահին: *Միայալ է, քանի որ հակասում է օրենսդրական կարգավորումներին:*

10 Ըստ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի՝ օրինական ներկայացուցչին վարույթից ազատելու հիմք է հետևյալ հանգամանքը.

Ա օրենքով կամ դատական ակտով նա չի կարող լինել օրինական ներկայացուցիչ: *Միայալ է, քանի որ դա վարույթից հեռացնելու հիմք է:*

Բ իր վարքագծով ակնհայտորեն նա վնասում է ներկայացվողի շահերին, իր վարքագծով խոչընդոտել է ներկայացվողի իրավունքների իրականացումը կամ հանգեցրել է դրանց խախտմանը: *Միայալ է, քանի որ դա վարույթից հեռացնելու հիմք է:*

Գ նրա վերաբերյալ առկա են ներկայացվողի շահերի դեմ ուղղված ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր: *Միայալ է, քանի որ դա վարույթից հեռացնելու հիմք է:*

Դ սահմանված կարգով երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո նա շարունակում է չարամտորեն չկատարել իր պարտականությունները: ***Ճիշտ է, քանի որ բխում է օրենսդրական կարգավորումներից:***